ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ապրիլի 2023 թվականի N 495 - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԱԶՄԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ և «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ 2023 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ:

2. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 2715 քաղաքացու, որոնցից 2431-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 124-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 160-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ համազորային (մոտոհրաձգային, կապի, հետախուզական, ինժեներական), հրթիռահրետանային մասնագիտություններով:

3. Սահմանել, որ՝

1) վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորայինների ռազմական ունակությունների կատարելագործման, մասնագիտական վերապատրաստման և պատրաստման, բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման, մարտական հերթապահության ներգրավման նպատակով.

2) հայտարարված վարժական հավաքների ընթացքում յուրաքանչյուր քաղաքացի ներգրավվում է ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով.

3) վարժական հավաքներ անցկացվում են հետևյալ փուլերով՝

ա. 2023 թվականի մայիսի 2-26-ը ներառյալ՝ ներգրավելով մինչև 380 քաղաքացի, որոնցից 334-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 19-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 27-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

բ. 2023 թվականի մայիսի 16-ից մինչև հունիսի 9-ը ներառյալ՝ ներգրավելով մինչև 380 քաղաքացի, որոնցից 334-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 19-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 27-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

գ. 2023 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 24-ը ներառյալ՝ ներգրավելով մինչև 716 քաղաքացի, որոնցից 641-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 34-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 41-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

դ. 2023 թվականի հունիսի 6-30-ը ներառյալ՝ ներգրավելով մինչև 889 քաղաքացի, որոնցից 801-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 37-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 51-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

ե. 2023 թվականի հունիսի 12-ից մինչև հուլիսի 6-ը ներառյալ՝ ներգրավելով մինչև 350 քաղաքացի, որոնցից 321-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 15-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 14-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Վարժական հավաքների ապահովման համար, 2023 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ, ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավել մինչև 278 միավոր տրանսպորտային միջոց՝

յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի ներգրավումը ոչ ավելի, քան 7 օրացուցային օր ժամկետով, բացառությամբ ճանապարհաշինարարական տրանսպորտային միջոցների, որոնց ներգրավումը ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով՝ համաձայն հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ